ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/176

«24» Հունիսի 2020թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2020թվականի հունիսի 24-ի թիվ 24-Ա որոշումը:

Առդիր՝ 1 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24 » Հունիսի 2020 թվականի N 24-Ա

## «Վ.Ն.Ս. ԵՌՅԱԿ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, համաձայն Ձորագետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 34 -Ն որոշման հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, հիմք ընդունելով «Վ.Ն.Ս. Եռյակ» ՍՊԸ-ի 2020 թվականի հունիսի 23-ի հայտը՝

Որոշում եմ.

1. «Վ.Ն.Ս. ԵՌՅԱԿ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 0692395/տալ Ձորագետ համայնքի 1 փողոց թիվ 1 հասցեում գտնվող հեղուկ վառելիքի՝ բենզինի լցման կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3..Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. հունիսի 24

հ. Ձորագետ